

ԱՐԱՐԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ*

ՆԵՐՍԵՍ ՄԿՐՏՁՅԱՆ

1. Ազո — «Գիրք վաստակոցում» ազո-ը հանդես է դալիս երկու իմաստով՝ ա) ճաղցուի կամ մեղրի դիրտ», բ) «վերքի շարավ»¹: Թեև ազո-ը բերված է 2. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում»², սակայն նրա ստուգաբանությունն ու ծագումը ըստ է թողնված: Հնարավոր է, որ նույն արմատից են նաև մի շարք բառարանների բերած ազո-աճաճ «աղբի մթերք» և ազո-աճաճ «ղիզված աղբ»³ ձևերը՝ հայերեն — անցածանցի հավելմամբ:

Թվում է, ազո-ը հնչմամբ և նշանակությամբ նույնանում է արաբերենի 'akar «պղտորություն, նստվածք, տականք, դիրտ» կամ akāra «նստվածք մը-րուր, տականք»⁴ բառի հետ: Որոշ առարկություն կարող է վերցնել արաբերենի Կ -ի դիմաց հայերեն գ-ի առկայությունը, սպասվող Բ-ի փոխարեն, սակայն պիտի հիշել, որ միջին հայերենում հաճախ էին շնչել խուլերի փոխարեն ձայնեղներ գրում, նկատի ունենալով ձայնեղների նման հնչումը ձայնավորներից հետո: Հետևաբար, սպասվող աֆո (կամ աֆաո) ձևերի փոխարեն ազո-ի առկայությունն այն նկատառման արդյունքն է, որ ազո-ը կարգացվելու էր աֆո:

2. Ասա — արաբերենից խոսակցական լեզվին (բարբառներին) անցած որոշ բառեր հետագայում միջին հայերենից և գրաբարով շարադրված կրոնական բնույթի երկերից դուրս են մղել դրանց հայերեն հոմանիշները: Այսպես, օրինակ, Գյուտ քահանա Աղանյանցի «Կարգ աստուածապաշտութեան Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ» գրքում կաթողիկոսական զգեստների և պարագաների շարքում հիշատակվում է նաև ասա-ն՝ «գավազանը»։ «Կաթողիկոսը հայրապետանոցից դուրս գալիս կրում է ձեռքին հայրապետական խաչազարդ ասա»⁵: Գրքի «Հայրապետական զգեստներ» բաժնում նկարված է նաև ասա-ն՝ «գավազանը»⁶: Հայրապետական գավազանի պատկերի տակ ասա է գրված նաև «էջմիածնի գանձերը» գրքում⁷: Բառս հայերենին անցած պիտի լինի արաբերենից, ուր 'asa նշանակում է «ծող, գավազան, ճիպոտ»⁸:

3. Խազ — հայերեն խազ «գիծ, գիր, ձայնագրման նշան, քերվածք, նետի ծայրի ճեղք» (բայականը՝ խազել «գծել, քերթել, նշաններ գծագրել, քերծոտել»)

* Այս վերնագրով մեր նախորդ երկու հոդվածներում (ՀՄՄՀ ԳԱ «Լրաբեր», 1980, № 3, էջ 49—64 և 1984, № 2, էջ 72—82) տեղ է տրված գերազանցապես վաղ արաբական փոխառությունների քննությանը: Ներկա հոդվածում գրաբարյան և մինչ գրաբարյան փոխառությունների հետ միասին քննարկվում են նաև ուշ շրջանում փոխառված արաբերեն բառերը, որոնք կամ չեն ներկայացված մեր բառարաններում, կամ նրանց ծագումները չեն տրված:

¹ «Գիրք վաստակոց», Վենետիկ, 1877, էջ 93, 213:

² 2. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 1, Երևան, 1971, էջ 78—79:

³ Երեմիա Մեղրեցի, Բառգիրք հայոց, Երևան, 1975, էջ 5, «նոր բառգիրք հայկազեան լեզուի» (այսուհետև՝ ՆՀԲ), հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 3, «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», Վենետիկ, 1865, էջ 2:

⁴ X. K. Баранов, Арабско-русский словарь (այսուհետև՝ АРС), М., 1962, с. 678:

⁵ Գ. Աղանյանց, Կարգ աստուածապաշտութեան Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ, Թիֆլիս, 1900, էջ 69:

⁶ Նույն տեղում, էջ 65:

⁷ «էջմիածնի գանձերը», էջմիածին, 1984 (գիրքը էջակալված չէ):

⁸ АРС, с. 664:

բառը ՀԱՐ-ում արձանագրված է որպես «կովկասյան փոխառություն»⁹։ Որպես դրա ապացույց բերված են վրացերենի xazva «գծեր, գծագրեր», mxazveli «գծագրող», daxazva «պլան, նկար», moxazva «պլանավորել» ձևերը, որոնց կովկասյան լինելու հարցը, սակայն, դրանով չի լուծվում¹⁰։

Թվում է, բառն արաբերենից է անցել հայերենին (ինչպես նաև վրացերենին), քանի որ այն արաբերենում առկա է hazā «թյարթել, վիրավորել, քերծել, անջատել, կտրել» նշանակություններով (կա նաև hazz, haz «ծակել, ծակծկել»)։ Որ վրացերենը կամ կովկասյան լեզուները չեն հայերենի փոխառու աղբյուր, կարող է ապացուցել ևս մի հանգամանք. դա խազել կամ խազ գոյություն ունի փաստն է նաև հայերենի այն բարբառներում, որոնք չեն շրջվել կամ չէին կարող շրջվել վրացերենի և կովկասյան լեզուների հետ (Ակն, Սեբաստիա, հարբերդ, հիան, Չենկիլեր, Սիվրի—Հիսար և այլն)¹¹։

4. Խալվաթ (խալվաթ, խուլվաթ, խովվաթ, խովվախա) «ազատ, հանգիստ, ամալի, մեկուսի, դադարկ, առանձնացած» բառը գործածական է հայերենի բազմաթիվ բարբառներում (գտվում է նաև խովվաթ, խովվաթ) և հաստատուն տեղ է գտել նաև արդի ժողովրդական խոսակցական լեզվի բառապաշարում։ Չնայած նրա այսքան լայն տարածում ունենալուն, այն չի ստուգաբանվել և նույնիսկ չի արձանագրվել ոչ մի բառարանում, բացառությամբ 1972 թ. լույս տեսած «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի»¹²։ Այն գրի է առնված բազմաթիվ խաղիկներում. օրինակ, Թբիլիսիի բարբառում՝

Սթախը խալվաթ կօնիմ...¹⁴

և այլ բարբառներում, ինչպես օր. Արի գնանք մեր տունը,

Թե ընտեղ խուլվաթ չելավ...¹⁵

Ի՞նչ կրկնի, որ մի օր էլ՝

խուլվախա վախտը մեր տուն գաս¹⁶։

Ինչպես նկատում ենք, վերջին խուլվախա, ձևում կատարվել է ժողովրդական ստուգաբանություն, բառի վերախմաստավորում՝ նրա բուն նշանակությունը չգիտակցվելու պատճառով։ Մանավանդ որ դրանից անմիջապես հետո գտնվող վախա «ժամանակ» բառը, ասես հուշում է նման իմաստի ընկալումը։ Իհարկե, չպիտի մտածել, որ խուլվախա ձևում գիտակցվել է վախա-ից զատ նաև խուլ՝ մի արմատ, որն իսկապես, թեև աղավաղված, արաբերենի hala 1 «դադարկ լինել, չգրադեցված, զրկված, շտեմնալ», 2. «մենակ լինել, առանձնալ» (որից՝ haluat «մեկուսացում, առանձնացում», նաև՝ «առանձնատուն, մեկուսարան») բառից է ծագում¹⁷։

5. Հաբ — Հ. Աճառյանի ՀԱՐ-ում որպես արաբերեն փոխառություն բերված է հապալա «մրտենու հատիկ, հունդ, սերմ» բառն իր ստուգաբանությամբ՝ habbal-as «հատ կամ պտուղ մուրտի» (habb «հունդ» և as «մրտենի») բառերից, իսկ al-ը հոդ է կամ սեռականի մասնիկ¹⁸։ Արաբերեն այս բարդությունն օգտագործվում է նաև հայերենի մի շարք բարբառներում, որոնցից ՀԱՐ-ը նշում է միայն Սվեդիայի ճրմբ. ուլու-ը¹⁹։ Սակայն հայերենում հաբ բառն ունի նաև

9 ՀԱՐ, 2, Երևան, 1973, էջ 316։

10 նույն տեղում։

11 APC, c. 211—212.

12 Տե՛ս Հ. Աճառյան, Գավառական բառարան (այսուհետև՝ ԳԲ), Թբիլիսի, 1913, էջ 445։

13 «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 2, Երևան, 1972, էջ 464։

14 Գ. Տեր-Աղեքսանյան, Թբիլիսեցոց մտավոր կյանքը (այսուհետև՝ ԹՄԿ), հ. Ա, Թբիլիսի, 1885, էջ 31։

15 Մ. Աբեղյան, Ժողովրդական խաղիկներ (այսուհետև՝ ՓԽ), Երևան, 1940, էջ 251։

16 ՓԽ, էջ 471։

17 APC, c. 299.

18 ՀԱՐ, 3, Երևան, 1977, էջ 44—45։

19 նույն տեղում, էջ 45։

անկախ, արմատական գործածություն, որը տշ միայն չի նշված ՀԱԲ-ում, այլև բերված չէ Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» մեջ՝ արաբերեն բառերի ցուցակում²⁰։ Մինչդեռ հաբ-ը (միջին հայերեն տառադարձությամբ՝ հապ) բազմիցս օգտագործված է բժշկարաններում, օրինակ, Մխիթար Հերացու մոտ գտնում ենք հապ արա «դեղահատ պատրաստիր» նշանակությամբ²¹։ Հենց այս՝ «դեղահատ», նշանակությամբ էլ հաբ-ը մոտեք է գործել մեր գրական լեզվի մեջ դառնալով հայերենի ակտիվ բառապաշարի անբաժանելի մասը։ Այն նշված է նաև Ս. Մալխասյանցի բառարանում²², սակայն, հավանաբար, վրիպել է Հ. Աճառյանի ուշադրությունից։ Եվ այսպես, հայերենի՝ արաբերենից կատարած փոխառությունների թվում պիտի ավելացնել նաև հաբ-ը, որպես նախադասության գոյություն ունեցող բառ։

Գ. Հաբինգ — միջնադարյան հայ բժշկարաններում և ապա արդի գրական հայերենում մեծ գործածություն ունեցող հաբինգ «լուծ», փորհաբինգ, փորհաբույրուն բառերում առկա հաբ — արմատը Հ. Աճառյանը զետեղել է ՀԱԲ-ում՝ հաբ «զարնել, խփել» արմատի տակ²³։ Եվ քանի որ հաբ — արմատն էլ բխեցվում է հ. - Ե. *qer «զարկել, խփել» արմատից, ապա արաբերենի հաբ «փորը սաստիկ լուծել» բառի հետ նկատված նմանությունը համարվում է «պատահական»²⁴։ Մինչդեռ Շիրակի, Արարատյան, Ղարաբաղի, Մջո, Գանձակի բարբառներում հաբինգ-ը «փորլուծություն» նշանակությամբ առկա է կենդանի խոսակցական լեզվում²⁵։

Մեզ թվում է, ավելի ճիշտ է հաբինգ բառի մեջ տեսնել արաբերենի հաբ «փորը սաստիկ լուծել»²⁶ իմաստը, քան թե հայերեն հաբ-ել «խփել, հարվածել» նշանակությունը, որն անիմաստ է դառնում։ Ի դեպ, արաբերենում կան նաև հաբա «լուծ» նշանակությունը²⁷։

Դ. Հեզ — հայերեն հեզ «բաղցր և հեզ բնությամբ, խոնարհ» բառը ՀԱԲ-ում մտնում է առանց ստուգաբանության, թեև այնտեղ բերվում են նաև ՆՀԲ-ի հեղինակների՝ որպես բառի լծորդ հիշատակվող արաբերենի խէզէ, խազը, խազու ձևերը²⁸։ Քանի որ արդեն ապացուցված է վաղ արաբահայ շփումների գոյությունը, ուստի ապահով կարելի է հեզ-ը փոխառություն համարել արաբերենի «հնազանդ, հեզ»²⁹ բառից, որի հետ համընկնում է և՛ իմաստային առումներով, և՛ հնչյունական անցումների տեսանկյունից։

Ե. Հրե — առ այսօր մտնում է չարագլած դասական ջրջանից ավանդված հրեի աուրախություն, ցնծություն, հրեվել, ուրախանալ, ցնծալ բառի ծագումը։ Նոր բառերի հայկազեան լեզուի հեղինակները արմատն են համարում հրե-ը³⁰, իսկ Հ. Աճառյանը՝ հրեի-ը³¹, որը պատճառաբանված չէ։ Այնուամենայնիվ, թվում է կապ կա արաբերենի հաբգ «զարգիս, հուզում, աղմուկ», հաբագա «հուզել, գրգռել, կատակել, ծաղրել», որից muharriğ «կատակ, զվարճախոս, ծաղրածու» բառերի հից արմատի³² և հայերեն հրե-ի միջև իմաստային հետագա զարգացումները երկու լեզուներում ապացույց են այդ բառի վաղ

20 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս Ա, Երևան, 1951, էջ 199—207։

21 «Մխիթարայ բժշկապետի Հերացու Ջերմանց մխիթարութիւն», Վենետիկ, 1932, էջ 144։

22 Ս. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1944, էջ 7։

23 ՀԱԲ, 3, էջ 52—53։

24 Նույն տեղում։

25 Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1911, էջ 388, ԳԲ, էջ 642. «Էմինյան ազգագրական ժողովածու», հ. Ա, Մոսկվա, 1901, էջ 218—278։

26 APC, c. 1082.

27 Նույն տեղում։

28 ՀԱԲ, 3, էջ 73—74։

29 APC, c. 261.

30 ՆՀԲ, Բ, Վենետիկ, 1837, էջ 142։

31 ՀԱԲ, 3, էջ 135։

32 APC, c. 1083.

արաբական փոխառությունների թվին պատկանելուն:

9. Մալխազ, մաղխազ — հայերեն մաղխազ բառը ստուգաբանելու մի քանի փորձ է արված: Օրինակ, Ն. Ադոնցը, հետևելով Գարագաշյանին, ենթադրում է մաղխազ-ը աստուրերենի malxazu «իշխան» բառից, որն անգո է, և կամ արաբերենի malīk «իշխան»-ից³³: Հ. Աճառյանը, անդրադառնալով Մաղխազ հատուկ անվան ծագման հարցին, «Հայոց անձնանունների բառարանում» գրում է. «հայ մաղխազ բառից, որ նշանակում է արքայական պահապանների զբլխավորը»³⁴: Ինչպես հայտնի է, հայոց Վաղարշակ թագավորը մաղխազությունը, այսինքն արքունի թիկնապահապետի և նախարարի պաշտոնը, հանձնել էր հուրիստուններին, որոնց ցեղը կոչվում էր նաև Մաղխազունիք³⁵: Հենց այս հանգամանքն էլ օգնում է պարզելու մաղխազ/մալխազ բառի ծագումը: Այն սեմական ծագում ունի և, անշուշտ, վաղ արաբական փոխառություններից է, քանի որ մեկնաբանվում է արաբերենով: Մագում է արաբերեն laḥaz «նայել, հսկել, հետևել, դիտել, պահպանել» բառից, որից էլ mulahaza «հսկող, հետևող, պահպանող, հսկիչ, պահպան»³⁶: Ձայնավորների տարբերության հանգամանքը ենթադրել է տալիս mulahaza-ի կողքին malahaza տարբերակի առկայությունը և կամ դա կատարվել է հայկական միջավայրում: Ասորա — արաբական կոյնեն կարող էր այդ բառը ժառանգել արամեերենից:

10. Մաֆթուլ, նաֆթուլ — հայերենի բազմաթիվ բարբառներում գործածական է մաֆթուլ (Թբիլիսիի բարբառ), նավթուլ, նաֆթուլ (Երևան, Արարատյան բարբառի խոսվածքներ) բառը՝ «մետաղալար» նշանակությամբ: Այս բառն արդեն երկու և կես դարից ափելի է, ինչ արձանագրված է հրապարակված գրքերում, սակայն զարմանալիորեն տեղ չի գտել ոչ մի բառարանում: Քանի որ չի ներկայացվել այն նաև ՀԱՅ-ում, ուստի և առ այսօր անհայտ է մնում նրա ստուգաբանությունը ու ծագումը: Սայաթ-Նուվայի խաղերում երկու անգամ օգտագործված է մավթուլ ձևով. «Մեշկըտ հադիդեմեն քաշած սիրմա մավթուլի նման է» և «Օսկե սիմ իս, մավթուլի պես դուս քաշած»³⁷: Գ. Տեր Ալեքսանդրյանը բերում է մավթուլի գործածության օրինակներ Թբիլիսիի բարբառից ԹՄԿ-ում³⁸: Մավթուլ/նաֆթուլ-ը փոխառություն է արաբերենից, ուր գտնում ենք՝ fataḥa, taftīl «հյուսել, միահյուսել, ոլորել, մանել», fatla, fitāl «գալար, մանվածք, թել», mavtūl «հյուսված թել», fitil «պատրույգ»³⁹ (ասորերեն՝ fātīla, թալմուդերեն՝ fīlā, եբրայերեն՝ pātil «թել, կապ» և այլն)⁴⁰: Բառիս ծագումը սեմական է pti/ftl «ոլորել, գալարել» արմատից: Ակկադերենում գտնում ենք՝ pātāl «պտտել, դարձնել, փաթաթել, ոլորել, գալարել», pīl ltu «ոլորք, ոլորած թել, պարան»⁴¹: Հայերենը սեմական լեզուների այս արմատից կազմված բառերը փոխ է առել մի քանի անգամ. նախ՝ պաաաղիլ «զբաղվել, պարապել», նաև՝ «դեգերել, պտտվել», որից էլ պաաաղիլն «բաղնի, որթի խիլը, պատատուկ» (այս երկու բառերի ծագումն էլ անհայտ է)⁴¹: հմմտ.՝ ալկ patāl- հայ. պաաաղ, որ կարող էր փոխանցվել նաև արամեերենի միջոցով, ապա՝ ֆիլթայ ձևով՝ «վերքի պատրույգ, պատրույգ» նշանակությամբ: ներով, որը կարող էր մուտք գործել հայերենի մեջ հարևան որևէ լեզվի միջ-

33 Ա. Մ. Գարագաշյան, Քննական պատմություն հայոց, հ. Ա, Թբիլիս, 1905, էջ 148, Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб., 1911, с. 400, ՀԱՅ, 3, էջ 239:

34 Հ. Աճառյան, Հայերեն անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, 1946, էջ 176:

35 «Արրոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ Հայոց պատմութիւն», Տփլիս, 1881, էջ 109, 290, «Ազաթանգեղայ պատմութիւն», Թբիլիս, 1883, էջ 502, 462, «Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն հայոց», Թբիլիս, 1913, էջ 46, 161, 366 և այլն:

36 APC, с. 714.

37 «Մայաթ-Նուվա», Երևան, 1945, էջ 11, 66:

38 ԹՄԿ, Ա, էջ 291:

39 APC, с. 745—746.

40 W. V. Soden, Akkadisches Handwörterbuch, Wiesbaden, 1965, S. 69, 78.

41 84.

41 Տե՛ս ՀԱՅ, 4, Երևան, 1982, էջ 34:

նորոգություն (հմմտ. պարսկ. pltila վրաց. ավար. pilita և այլն)⁴² և վերջապես, ավելի ուշ շրջանում թուրք. ֆիթիլ ձևով, որ արաբերենի fitil -ից է⁴³, սակայն կարող էր լինել նաև ոչ տղղակի արաբերենից: Եվ այսպես այսօր հայերենում սեմական ptil/fil արմատից ունենք՝ պատալ-ել, պատաղ-իմ, փիթայ, ֆիթիլ, մաֆթուլ/նաֆթուլ բառերը, որոնք տարբեր ուղիներով և տարբեր հնչյունական անցումներով են փոխանցվել մեզ:

11. Նախատ (րայականը՝ նախատել) — դասական շրջանից է ավանդված նախատ բառը՝ «անարգանք, խայտառակություն» նշանակություններով, ինչպես օրինակ. «Եղէ ես նախատ դրացեաց իմոց», «Ամօթ կրէ և նախատ լիցի» և այլն⁴⁴: Բառիս ծագումն ու ստուգաբանությունը չի որոշվում ՀԱԲ-ում. ենթադրել են կազմված նախ և ատել եզրերից կամ «իբր նեխեալ, և ճոտեալ ատել նա և խալթել, ինչպես նաև՝ նա և խալեալ» եզրերից⁴⁵: Մինչդեռ իսկական ակունքը մատնվել է անուշադրության: Այսպես օրինակ, Հ. Աճառյանը հարևանցիորեն նշում է արաբերեն nahlī «նախատել, խայտառակել» բառի հետ «պատահական նմանություն» ունենալու հանգամանք⁴⁶: Որոշ դժվարություն է ներկայացնում արաբերենի վերջին վանկի փ-ի դիմաց հայերենի ա-ի առկայությունը, սակայն բազմաթիվ այլ օրինակներում ևս նկատվում են նման շեղումներ. այսպես՝ արաբերեն uahid—վհատ, munadi—հայերեն մուճետիկ, արաբերեն mahaga հայերեն մաճիճ և այլն: Հետևաբար, հայերեն նախատ-ի և արաբերեն nahlī -ի նմանությունը պատահական չպիտի համարել, այլ կենդանի խոսակցական լեզվից կատարված (ոչ գրքային) փոխառություն, որը (ինչպես և մյուս՝ շեղումներ դրսևորող զուգահեռները) կարող էին ունենալ բարբառային տարբերակներ:

12. Շուբաֆ, շբաֆ (շբակ) — Հ. Աճառյանը թեև երկու անգամ տարբեր աղիթներով անդրադառնում է շբակ կամ շբաֆ բառին, սակայն ՀԱԲ-ում այս բառին հատուկ տեղ չի հատկացնում: Այսպես՝ առաջին անգամ անդրադառնալով մուշապաֆ («կարասի բերանի ծակոտկեն խուփ, որ հյուսված է ճյուղերով») բառին, իրավացիորեն նշում է նրա փոխառյալ լինելը արաբերենի, mušabbak «ցանցաձև, ցանցկեն հյուսված» բառից, որը šabk «ցանցաձև հյուսել» բայի անցյալ դերբայի ձևն է (տե՛ս նաև šabaka «վանդակ, հյուսկեն ցանց»)⁴⁷: Երկրորդ անգամ, անդրադառնալով Աստվածաշնչի Զորորող Թագավորաց գրքում գործածված սաբաֆ/կ բառին, ճիշտ է նկատում, որ այն եբրայերենի sə bāka «ցանց, ցանցակերպ պատուհան կամ դուռ» բառն է (հմմտ. արաբ. šabaka) և հունարենի sabaka (σαβακα) տառադարձությամբ է անցել հայերենին, ուր բացակայում է շ-ն⁴⁸: Բազմաթիվ հայերեն բարբառներ կենդանի արաբերենից են կառուցվել փոխառությունը, տեստի չկա միասնական մի ձև, այլ՝ շբակ, շբաֆ, շաբաֆա, շապաֆայ, բայց ոչ՝ սաբաֆ(ա): Աբուսայիդի «Յաղագս կազմութեանն մարդոյ» գրքում գտնում ենք շապաֆայ հնչապատկերը⁴⁹: Ռիվոլայի կազմած «Բառագիրք հայոցն» ունի շբակ «պատի կույր պատուհան» (վանի բարբառում)⁵⁰: «Լուսամուտ, պատուհան» (Տիգրանակերտի բարբառում), իսկ Սվեգիայի բարբառում շբաբբի «ռուկան, ձկնորսի ցանց»⁵¹ և Թբիլիսիի, Արարատյան բարբառներում՝ «դռան ցանցապատ լուսամուտ» նշանակություններն ունի, օրինակ, Շաբաբա դռան էդնէն մե սիրուն տըղա տեսա՞մ⁵²:

42 ՀԱԲ, 4, էջ 501:

43 APC, c. 746.

44 ՆՀԲ, Բ, էջ 397:

45 ՏԵ՝Ն ՆՀԲ, Բ, էջ 397, ՀԱԲ, 3, էջ 420:

46 ՀԱԲ, 3, էջ 420:

47 ՀԱԲ, 3, էջ 360:

48 ՀԱԲ, 4, էջ 151:

49 Աբուսայիդ, Յաղագս կազմութեանն մարդոյ, Երևան, 1974, էջ 180, 223:

50 ՏԵ՝Ն ՀԱԲ, 3, էջ 390:

51 Տ. Անդրեասյան, Սվեգիայի բարբառը, Երևան, 1967, էջ 262:

52 ԺԵ, էջ 197, 198, ԹՄԿ, Ա, էջ 59:

նվ ալսպես, դեռևս միջին դարերից հայ մատենագրության մեջ և բարբառներում գործածված լինելու իրավունքով ՀԱԲ-ում մուշաբաֆ-ի հետ պիտի տեղ գրավի նաև շաբաֆ-ը կամ շբալ/բ-ը, որպես անկախ գործածություն ունեցող մի բառ:

13. Ծոպ — Հ. Աճառյանի ՀԱԲ-ում բերված է շոպ (կամ սխալ գրությամբ՝ շոբպ) «բույսերի արևահարություն» բառը, որն օգտագործված է «Գիրք վաստակոցում», սակայն առանց ստուգաբանության կամ ծագումը նշելու⁵³: Այն գործածական բառ է նաև հայերենի հարավային բարբառներում, օրինակ, Սվեդիայի բարբառում շոպ «երաշտ, չորություն» նշանակություն ունի⁵⁴: Ծոպ-ը կամ շոպ-ը ծագում է արաբերենի šaub «տոթ, այրող քամի» կամ šauba «տոթ, տապ» բառից⁵⁵:

14. Շփանալ — հայերեն շփանալ «հագենալ, կշտանալ, խրոխտանալ, ամբարտավանությամբ պարծենալ» բառի վերաբերյալ տրված ստուգաբանությունները վստահելի չեն: Առաջարկված է այն միջնորդավորված կերպով համարել հ.-հ. *sp(h)ē(i) «աճել, ծաղկել, ընդարձակվել» արմատից, հին հնդկ. sphāyatē «ճարպակալում է, գիրանում է», sphila «ուռած, կարող», թերևս նաև այլ զուգահեռների մատնանշմամբ⁵⁶: Ավելի վստահելի է թվում նրա սեմական ծագում ունենալու հավանականությունը՝ արաբերենի šabu'a «հագենալ, կըշտանալ», šaba «կուշտություն, հագեցածություն, բավարարվածություն»⁵⁷ բառերի առկայությամբ: Արաբերենի Ե-ն հայերենում հայտնվելով շ-ին անմիջապես մոտ, վեր է ածվել շնչեղ խուլի և սպասվող շբանալ-ի փոխարեն բառը ստացել է շփանալ հնչումը:

15. Մըսֆին, մսֆնութին — թեև միջին դարերից մըսֆին (կամ մսֆին) բառը մուտք է գործում բարբառներն ու գրականության մեջ, սակայն առ այսօր դուրս է մնում բառարաններից, և, հետևաբար, չի տրվել նրա ծագումը: Օրինակ, հայկական միջնադարյան ժողովրդական խաղերից մեկում ասվում է. «Մըսֆին պառավ, մի տրտնջար...»⁵⁸, ուր օգտագործված է «թշվառ, խեղճ, աղքատ, նվաստ, անտեր» նշանակություններով: Հանդիպում ենք նաև մսֆնութին ձևվին⁵⁹:

16. Սաղաղ — Հ. Աճառյանի ՀԱԲ-ում սաղաղ-ը ներկայացված է որպես «նորագյուտ բառ՝ անհայտ նշանակությամբ»⁶⁰: Սաղաղ-ը գործածված ենք գրությունում Մեծոփեցու մոտ: Առաքեաց զմի յաշակերտաց իրոց Յովհաննէս անուն, մականուն սաղաղ կոչեցեալ, այր սուրբ և մաքուր հոգւով»⁶¹: Հ. Աճառյանի արձանագրած «անհայտ նշանակությամբ» բառն արաբերենի sadaqa «հավատարիմ, ճշմարիտ, վստահելի, հաստատ, անկեղծ»⁶² բառն է: Ինչպես հայտնի է, արաբերենի س «գաֆ» տառը հայերենում տառադարձվում է տարրեր կոկորդային հնչյուններով՝ կ, գ, ֆ, կամ դ: Տվյալ դեպքում sadaq-ի դիմաց ունենք սաղաղ հնչապատկերը: Իմաստային առումով էլ հաստատվում է սաղաղ-ի ծագումը արաբերենի sadaq-ից, քանի որ Հովհաննեսի անձը բնութագրող «այր սուրբ և մաքուր հոգւով» արտահայտության անմիջական լրացումն է սաղաղ մականունը:

17. Վաքվաթ — Հ. Աճառյանը, ՀԱԲ-ում բերելով վաքվաթ բառը, տալիս է

53 «Գիրք վաստակոց», էջ 74, ՀԱԲ, 3, էջ 531:

54 Տ. Անդրեասյան, նշվ. աշխ., էջ 263, 180:

55 APC, c. 528.

56 ՀԱԲ, 3, էջ 546, Գ. Բ. Джаукян, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967, с. 255.

57 APC, c. 490—491.

58 «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր», Երևան, 1956, էջ 327:

59 «Պատմութիւն վառն մանկանն եւ աղջկանն, Պատմութիւն յաղագս Փահլու թագաւորին», Երևան, 1983, էջ 73:

60 ՀԱԲ, 4, էջ 153:

61 Նույն տեղում, էջ 153:

62 APC, c. 546.

նրա նշանակությունը՝ «գիշերամուկն» (այսինքն՝ «չղջիկ»), հղելով Քաշունու բառարանը⁶³, Այս բառը ներկայացվում է առանց ստուգաբանության կամ ծագումը նշելու: Վաթվաթ-ը, անկասկած, փոխառություն է արաբերենի vadvad «չղջիկ»⁶⁴ բառից, որն անցել է նաև հարևան մյուս լեզուներին՝ պարսկերենին՝ vatvat «չղջիկ»⁶⁵, փուշտուին (աֆղաներենին) vatvat «չղջիկ, անկայուն մարդ»՝ նշանակություններով⁶⁶:

78. Վսեմ — հայերեն վսեմ «գերագույն, վեհ, կատարյալ, շքեղ, ազնիվ, բարձր» բառն ավանդված է դասական շրջանից սկսած: ՀԱԲ-ում նրա ծագման հարցը թողնված է անորոշ⁶⁷: Թվում է, արաբերեն փոխառություն է, վաղ արաբահայ մերձեցումների ժամանակներից: Արաբերենում գտնում ենք ʿasīm «գեղեցիկ, շքեղ, բարետես», ʿasamat «գեղեցկություն, բարետեսություն, շքեղություն»⁶⁸, որոնք իմաստային առումով և հնչյունական անցումների տեսանկյունից հաստատում են փոխառության հնարավորությունը:

АРАБСКИЕ ЗАИМСТВОВАНИЯ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

НЕРСЕС МКРТЧЯН

Р е з ю м е

Арабизмы армянского языка, часть которых является результатом раннеарабско-армянских контактов, как например, խազ, հեզ, մալխազ, հրճ, նախառ, վսեմ, պատաղել, ազո, ասա, խավաթ, հար, հարինք, շարաթ, շիանալ, մաֆթուլ, ֆիթիլ, շոպ, մսքին, սաղաղ, վաթվաթ, проникли в армянский язык в большинстве случаев через диалекты, т. е. через живые армяно-арабские контакты, после завоевания Армении арабами и после падения Халифата, в средние века.

Большая часть рассматриваемых слов до сих пор считалась либо словами «неизвестного происхождения», либо имеющими «случайное сходство» с арабскими параллелями.

⁶³ ՀԱԲ, 4, էջ 294.

⁶⁴ АРС, с. 1139.

⁶⁵ «Персидско-русский словарь», т. II, М., 1985, с. 704.

⁶⁶ «Афганско-русский словарь», М., 1966, с. 951.

⁶⁷ ՀԱԲ, 4, էջ 348—349.

⁶⁸ АРС, с. 1129.